

թյան հաղորդումից հետո, փակման խոսքով հանդես եկավ կոնգրեսի պրեզիդենտ Բ. Պաֆուրովը, որը նշեց կոնգրեսի առավել կարևոր առանձնահատկությունները: Նա ասաց, որ արևելագիտության ապագան հենց իրենց՝ Արևելքի երկրների գիտնականների ձեռքին է: Ներկա կոնգրեսը առանձնահատուկ պարզությամբ ու համոզությամբ ցույց տվեց, որ արևելագիտության մեջ նորի, առաջադիմականի, արդիականի վերջնական հաղթանակն ամենասերտ կերպով կապված է Ասիայի ու Աֆրիկայի գիտնականների հարաճուն դերի հետ: Բ. Պաֆուրովը վերջում նշեց, որ կոնգրեսի աշխատանքները սկսվելու են հետաքրքիր եզան և շատ նորություններ տվեցին համաշխարհային արևելագիտությանը:

Պլենար նիստում որոշում ընդունվեց Արևելագիտության համաշխարհային հաշորդ՝ XXVI կոնգրեսը անցկացնել Հնդկաստանում:

Օգոստոսի 16-ի երեկոյան ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի նախագահությունը կրեմլում կազմակերպեց կոնգրեսի մասնակիցների ընդունելություն: Ակադեմիայի նախագահության կողմից ողջույնի խոսք ասաց վիցեպրեզիդենտ Կ. Սաուրովիտյանովը, որը գրական գնահատական տվեց կոնգրեսի աշխատանքների արդյունքներին: Ողջույնի խոսք ասացին նաև արտասահմանյան մի շարք երկրների ներկայացուցիչներ:

Նշանակալից էր հնդկական դեկզագիայի ղեկավար Չաքերթիի ելույթը, որի մեջ նա գոհունակությամբ խոսեց այն մասին, որ կոնգրեսը տեղի ունեցավ սոցիալիստական մեծ պետության մայրաքաղաքում, որտեղ, որպես հավասար կողմեր, հանդես եկան Արևմուտքի և Արևելքի գիտնականները:

Կոնգրեսը մեծ իրադարձություն էր սովետական գիտական հասարակայնության կյանքում: Գ. ՍԱՐԳՍՅԱՆ, Հ. ԵԳԱՆՅԱՆ:

## ԵՎՐՈՊԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայոց պատմության, լեզվի և բանասիրության հարցերը զբաղեցրել են ոչ միայն հայ գիտնականներին, այլև Եվրոպական տարբեր երկրների ուսումնականներին, որոնք անցյալ դարում և մեր դարի սկզբին իրենց կատարած ուսումնասիրություններով զգալիորեն նպաստել են հայագիտության զարգացմանը:

Այսօր հայագիտությամբ զբաղվում են աշխարհի զանազան մասերում: Ժամանակակից Եվրոպական հայագիտությունը ևս որոշ նվաճումներ է կատարում և արժանի է ուշադրության:

Խոսելով Եվրոպական ժամանակակից հայագիտության մասին, պետք է նշել, որ նա բավական տարբերվում է անցյալի Եվրոպական հայագիտությունից:

Հայագիտությունը բառիս բուն իմաստով ձևավորվել է XIX դարում և նրա զարգացման մեջ Եվրոպական հայագիտությունը անցյալում զգալի դեր է կատարել: Վերջինս ծագել է Եվրոպական այլևայլ երկրներում, բայց նրա զարգացման հիմնական երկու օջախները անցյալ դարում եղել են Ֆրանսիան և Գերմանիան: Որպես բանասիրական առարկա, հայագիտությունը մտնում է նաև ավելի լայն բաժինների մեջ, ինչպես, օրինակ, հայ-վրացական բանասիրու-

թյան, կովկասագիտության, քրիստոնյա Արևելքի կամ էլ ընդհանրապես արևելագիտության մեջ: Այս բոլորի ընդհանուր զարգացումով էր պայմանավորված նաև բուն հայագիտության զարգացումը: Այսպես, օրինակ, արևելագիտության (և մանավանդ իրանագիտության) ծագումը անցյալում մեծ չափով նպաստել է հայագիտության մեջ քննական մտքի ներթափանցմանը, մի բան, որը խթանեց պատմա-համեմատական մեթոդի հիման վրա հայ լեզվաբանության զարգացումը, օգնեց հայ մատենագիրների ավելի ճիշտ գնահատմանը և վերջապես հայոց պատմության քննական տեսանկյունից վերաշարադրմանը:

Անցյալի Եվրոպական հայագիտության բնորոշ հատկանիշներից մեկն այն էր, որ նա իր առաջ դնում էր հանգուցային հարցեր, որոնց լուծումը մեծ չափով նպաստել է հայագիտության զարգացմանը: Հիշենք լեզվաբանության մեջ Հ. Հյուրշմանի աշխատությունները, ինչպես, օրինակ, նրա «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանակում» (1875) ուսումնասիրությունը, որը որոշեց հայերենի տեղը հնդեվրոպական այլ լեզուների շարքում՝ որպես անկախ խմբի պատկանող լեզվի և ոչ թե իրանական խմբի լեզուներից մեկի (ինչպես նախապես կարծում էին): Մեծ նշանակություն ունեն նաև Հյուրշմանի հայագիտական այլ աշխատությունները, որոնց մեջ նա քննարկման է ենթարկում հայերենի՝ այլ լեզուներից կատարած

<sup>1</sup> Ժամանակակից առեւելի նկատի ունենք վերջին երկու կամ երեք տասնամյակների շրջանը:

փոխառությունների հարցը և այլն<sup>1</sup>։ Մեծ է վաստակը նաև Ա. Մելի, որի արժեքավոր աշխատությունների մեջ քննարկվել են գրաբարի բերականությունը՝ հնդեվրոպական լեզուների պատմա-համեմատական ուսումնասիրման լույսի տակ։

Պատմագիտության բնագավառում առանձնապես կարևոր է հիշել բաղմավաստակ հայագետ Յ. Մարկիվարտին։ Պատմական հարցերը նա վերցնում էր լայն ընդգրկումով և մի երկրի պատմության հարցերը լուծելիս թափանցում էր նաև այլևայլ երկրների պատմության մեջ, իսկ աղբյուրների օգտագործման նրա եղանակը ուղղակի կարելի է օրինակելի համարել։ Այսպես, օրինակ՝ «Հարավային Հայաստանը և Տիգրիսի աղբերակունքը» գրքում Հարավային Հայաստանի պատմության շատ հարցեր պարզաբանելու համար նա օգտագործում է հայկական, հունական, արաբական, ասորական և այլ աղբյուրների հենց բնագրերը։

Մեծ է եղել եվրոպացի հայագետների ծառայությունը նաև հայ մատենագրության ուսումնասիրման բնագավառում։ Բացի նրանից, որ է. Դյուլուրիևի, Վ. Լանգլուայի նման հայագետներ հայ մատենագիրներից ֆրանսերեն լեզվով բաղմավիվ թարգմանություններ են կատարել, նրանք միևնույն ժամանակ տվել են հայագիտական լուրջ ուսումնասիրություններ։ Եվրոպայի հայագետները կարևոր դեր խաղացին մանավանդ հայկական իրիկիայի պատմության հարցերի շարադրման գործում (Վ. Լանգլուա, է. Դյուլուրիև և այլք)։

Եվրոպական ժամանակակից հայագիտությունը վերցնում է փոքր, ոչ խոշոր հարցեր, մեծ մասամբ զբաղվելով բանասիրական ճշտումներով և կամ հայ մատենագիրների որոշ թարգմանություններով։ Իհարկե, այս բոլորը կատարվում է նույնպիսի գիտական բարեխրդճությամբ, ինչպես անցյալում, ուստի և եվրոպայի ժամանակակից հայագետների աշխատությունները մեր հայագետների ուղադրությունից չպետք է վրիպեն։

Եվրոպական հայագիտության մասին խոսելիս հիշատակելի է այն կարևոր դերը, որ կատարել են Վիեննայի և Վենետիկի հայագետները։ Գտնվելով եվրոպական հողի վրա և յուրացնելով իրենց ժամանակի բանասիրական նվաճումները, նրանք իրենց գործունեությամբ մի կողմից խրախուսել են եվրոպացի հայագետներին, հրատարակելով վերջիններիս որոշ աշ-

խատությունները, իսկ մյուս կողմից նրանց լավագույն ուսումնասիրությունները թարգմանել են հայերեն և այսպիսով հրավիրել հայ հասարակության ուղադրությունը եվրոպական հայագիտության նվաճումների վրա։ Վիեննայում դեռ շարունակվում է «Հանդես ամսօրյայի» հրատարակումը, որը կարելի է անվանել առաջին հայագիտական հանդեսը։ Այժմ նա իր գոյությունը պահպանում է շնորհիվ մի քանի բանասերների ջանքերի։

Եվրոպական հայագիտության հնագույն օջախը հանդիսացող Ֆրանսիայում դեռ որոշ հետաքրքրություն է ցուցաբերվում հայկական բանասիրության այլևայլ հարցերի նկատմամբ, սակայն հայագիտության անկումը այնտեղ ակնհայտ է։ Ուշագրավ է Լ. Բուսեի կողմից 1947 թ. լույս ընծայված «Հայոց պատմությունը»<sup>2</sup>, որը հեղինակի միակ դուռ հայագիտական աշխատությունն է և ընդգրկում է հայոց պատմությունը սկզբից մինչև 1071 թվականը (Մանազկերտի ճակատամարտը)։ Արժեքավոր է այս գրքի՝ Բագրատունյաց թագավորությանը նվիրված հատվածը, որի շարադրման համար հեղինակը օգտագործել է հայկական, արաբական և մանավանդ բյուզանդական աղբյուրները։

Այժմ Փարիզում գործում է հայագետ Ֆ. Ֆելդին, որն զբաղվում է հայոց լեզվի հարցերով։ Իր գոյությունը դեռ շարունակում է Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցը, որտեղ 1912 թ. սկսած գոյություն ունի հայագիտական ամբիոն։ Ֆրանսերեն գրող հայ հեղինակներից կարելի է նշել Թորոսյանի անունը, որն արդեն ֆրանսերեն լեզվով հրատարակել է հայ գրականության պատմություն, հայոց պատմություն և այժմ պատրաստվում է հրատարակել Հ. Մանանդյանի «Տիգրան Բ և Հոռմը» հայտնի աշխատության ֆրանսերեն թարգմանությունը։

Լոնդոնի համալսարանին առնթեր Արևելյան և Աֆրիկյան հետազոտությունների դպրոցում նույնպես հայագիտության մի ճյուղ գոյություն ունի, որտեղ դասավանդում է հայագետ պրոֆ. Չ. Դովսերը։ Նա իր հայագիտական ուսումնասիրությունները հրատարակում է նույն դպրոցի Հանդեսում<sup>2</sup>։ Դովսերը հրատարակության է

<sup>1</sup> R. Grousset, Histoire de l'Arménie des origines à 1071, Paris, 1947.

<sup>2</sup> C. Dowsett, A neglected passage in the History of the Caucasian Albanians, B. S. O. A. S. XIX, 1957, էջ 456—460: The Albanian Chronicle of Mxitar Gosh, B. S. O. A. S., XXI, 1958, էջ 472—490:

<sup>1</sup> Գ. Ջարրհանյան, Ուսումնասիրություններ հայ լեզուի և մատենագրության յարեմուտս, Վենետիկ, 1893, էջ 306—314:

պատրաստել հայ պատմիչ Մովսես Կաղանկատ-  
վացու Աղվանից պատմության անգլերեն թարգ-  
մանությունը, ինչպես նաև պատրաստում է XII  
դարի հայկական օրենսգրքի՝ Դավիթ Ալավկա-  
որդու կանոնների և Սասունցի Դավիթ զյուցազ-  
նավայի անգլերեն թարգմանությունը:

Անգլիայում է գործում նաև հայտնի իրանա-  
գետ Վ. Մինորսկին, որի աշխատությունների  
մեջ հայոց պատմության հարցերի լուսաբանու-  
մը կարևոր տեղ է գրավում: Մինորսկին հայա-  
գիտական հարցերին մոտենում է իրանագիտա-  
կան տեսանկյունից: Այսպես, դեռ 1930 թ. հրա-  
տարակաժ իր կովկասագիտական նոթերի մեջ<sup>1</sup>  
տալիս է «Դվին» տեղանվան ստուգաբանությու-  
նը, հաստատելով խորենացու հայտնի ստուգա-  
բանությունը («բլուր» իմաստով) և հանգում է  
այն եզրակացության, որ այդ անունը իրոք գա-  
լիս է իրանական միջավայրից: Համաշխարհա-  
յին II պատերազմից հետո Մինորսկին ավելի է  
մերձենում հայագիտությանը, նրա «Կովկա-  
սյանք նվիրված պատմության մեջ» հոգվա-  
ծր<sup>2</sup> մի ուշադրավ աշխատություն է, որի մեջ  
ամփոփ կերպով շարադրվում են XII դարի  
արար պատմիչ ալ-Ֆարիկիի տեղեկությունները  
Վրաստանի և Հայաստանի վերաբերյալ: Նկատի  
առնելով, որ այս արար պատմիչի աշխատու-  
թյան արաբերեն բնագիրը դեռ չի հրատարակ-  
ված, Մինորսկու սույն հոգվածը որոշ իմաստով  
բնագրի արժեք ունի: Այս նույն պատմագրի,  
ինչպես նաև արար, հայ և այլ մատենագիր-  
ների այլևայլ տեղեկությունները առատորեն  
օգտագործված են Մինորսկու մի նոր աշխատու-  
թյան մեջ («Ուսումնասիրություններ Կովկասի  
պատմության մասին»<sup>3</sup>). որը Շաղղաղյանների  
պատմությանը նվիրված մի մենագրություն է:

Հայաստանի և այլ երկրների պատմության  
ուսումնասիրման համար Մինորսկին օգտագոր-  
ծում է ոչ միայն արաբական և պարսկական  
միջնադարյան աղբյուրները, այլև հաճախ  
հենվում է այն ճոխ տեղեկությունների վրա,  
որ հաղորդում են հայ պատմիչները արևել-  
յան երկրների պատմության մասին: Իր նո-  
րագույն հոգվածներից մեկում<sup>4</sup> նա հենվում  
է Թովմա Մեծոփեցու աշխատության վրա, պար-

զաբանելու համար XV դարում Կարա-կոյունլու-  
ների ժամանակաշրջանի մի շարք հարցեր:

Իսլամի հանրագիտարանի առաջին հրատա-  
րակության մեջ լույս են տեսել նրա գրչին պատ-  
կանող հոգվածներ՝ նվիրված հայագիտությանը  
առնչվող հարցերին (օրինակ, «Վան»՝ հոգվա-  
ծր), իսկ նույն հանրագիտարանի նոր հրատա-  
րակության մեջ Մինորսկին վերամշակել է հան-  
գուցյալ արևելագետ Վ. Բարթոլդի «Անի»<sup>2</sup> հոգ-  
վածը:

Ֆրանսիական հայագիտության հետ սերտո-  
րեն կապված են Բելգիայի հայագետները: Բրյու-  
սելի համալսարանում բյուզանդագիտության և  
հայագիտության ամբիոնի վարիչ էր ակադեմիկոս  
գիտնական Նիկողայոս Ադոնցը (մահ. 1947):  
Այժմ Բելգիայի Լուվեն քաղաքում հրատարակ-  
վող «Լը Մյուզեոն» ֆրանսիական հանդեսը  
լայն տեղ է տալիս հայագիտական հոգվածնե-  
րին: Սրան է աշխատակցում հին սերնդի հայա-  
գետներից Ժ. Մյուլդերմանը, բայց ամենից  
ավելի աչքի է ընկնում Ժ. Գաոիթը՝ Ագաթան-  
գեղոսի մասին հրատարակած իր ուսումնասի-  
րություններով<sup>3</sup>, նա քննարկման է ենթարկել  
Ագաթանգեղոսի թարգմանությունները՝ հունա-  
րեն, արաբերեն ու վրացերեն և հրատարակել է  
Ագաթանգեղոսի հունարեն մի նոր օրինակը, որը  
կոչվում է Մագրիդյան: Այս վերջինս, ըստ Գա-  
ոիթի, հիմք է ծառայել արաբական թարգմա-  
նությանը: Այս բնագրի հրատարակումից մի  
քանի տարի հետո Գաոիթը նգիպոսի ս. Կա-  
տարինեի վանքում գտնում է Ագաթանգեղոսի  
մի արաբերեն շատ ամփոփ թարգմանություն,  
որտեղ շարադրված է հիմնականում հայոց դար-  
ձի պատմությունը: Նա հայտնաբերել է ևս մի  
ձեռագիր՝ Ագաթանգեղոսի արաբերեն թարգ-

<sup>1</sup> Wan, The Encyclopaedia of Islam, Leyden-London, 1932, v. IV, էջ 1119-1121:

<sup>2</sup> Ani, El, New Edition, 1957, v. I, էջ 507-508:

<sup>3</sup> G. Garitte (1), Fragments palimpsestes de l'Agathange grec, Le Muséon, t. LVI, 1943, էջ 35-53:

(2) Fragments de l'Agathange grec en traduction arabe, Le Muséon, t. LIX, 1946, էջ 413-420:

(3) Documents pour l'étude du livre d'Agathange, Roma, Citta del Vaticano, 1946 (Studi e testi 127).

(4) Sur un fragment georgien d'Agathange, Le Muséon, t. LXI, 1948, էջ 89-102:

<sup>4</sup> Նույնի՝ Une Vie arabe de saint Gregoire d'Armenie, Le Muséon, t. LXV, 1952, էջ 51-71:

<sup>1</sup> V. Minorsky, Le nom de Dvin, „Journal Asiat.“, 1930.

<sup>2</sup> Նույնի՝ Caucasia in the History of Mayyafariqin, B. S. O. A. S., 1949.

<sup>3</sup> Նույնի՝ Studies in Caucasian History, London, 1953.

<sup>4</sup> Նույնի՝ Thomas of Metsop on the Timurid Turkman Wars, Muh. Shafi Presentation Volume, 1955, էջ 1-15:

մանությունը<sup>1</sup>, որը նրա կարծիքով հունականից է թարգմանված:

Այժիրում է գտնվում ֆրանսիացի արևելագետ Մ. Կանարը, որն ունի զանազան աշխատություններ՝ նվիրված հայոց պատմության և ֆաթիմյան շրջանի Եգիպտոսի հայ վեզիրների գործունեության հարցերին: Նա հայագիտական հարցերին մոտենում է արաբագիտական տեսանկյունից: Իր ընդարձակ աշխատության մեջ («Ասորիքի և Զազիրայի Համգանյան հարստության պատմությունը»)<sup>2</sup> նա շարադրում է Բագրատունյաց Հայաստանում գոյություն ունեցող արաբական մանր ամիրայությունների ամփոփ պատմությունը, ցույց է տալիս հայկական որոշ գավառների նկատմամբ Համգանյանների ունեցած հավակնությունները և այլն: Նույն նյութին է վերաբերում նաև նրա մեկ ուրիշ հոդվածը, նվիրված հենց այս վերջին հարցին<sup>3</sup>:

Մ. Կանարը եվրոպական արևելագիտության մեջ որոշ հեղինակություն ունի հայոց պատմության հարցերում: Այսպես, նա հիմնական հեղինակն է այժմ վերահրատարակվող «Խալամի հանրագիտարանի» «Արմինիա» ծավալուն հոդվածի<sup>4</sup>, որտեղ միայն փոքր հատվածներ պատկանում են ուրիշների գրչին (Կ. Կահեն և Ժ. Դրեն):

Ուշադրության արժանի է չեխ գիտնականների ոգևորությունը հայագիտության նկատմամբ: Պրագայի համալսարանում, որը հայտնի է որպես արևելագիտական լուրջ կենտրոն, գոյություն ունի հայագիտության դասընթաց: Վերջերս Երևանում էր չեխ հայագետ Եգլիչկան: Նա եկել էր մոտիկից ծանոթանալու այն երկրին, որի պատմությունը և մշակույթը իր ուսումնասիրության առարկան է դարձրել:

Ռումինիայում իր ուսումնասիրություններով հայտնի է հայագետ Վ. Իրնըցյանուն, որը վերջերս հանդես եկավ շահեկան հոդվածներով Ռումինիայի արևելագետների հրատարակած Արևելագիտական տարեգրքում<sup>5</sup>, ուր հայագի-

տական հոդվածները պատկառելի տեղ են գրավում:

Հայագիտության նկատմամբ հետաքրքրություն կա նաև Լեհաստանում ու Հունգարիայում: Վերջերս հունգարական արևելագիտական հանդեսի էջերում հոդվածներ է զետեղում Շյուցը, նվիրված հայագիտական մանր հարցերի (ինչպես, օրինակ, «խաշար» բառի ստուգաբանության) մասին՝ որպես «պետական պարտադիր ծառայություն»): Հետաքրքրական է նրա հրատարակած հոդվածը Ամստերդամում հայկական տպագրական գործում որոշ գեր խաղացած մի հունգարացու մասին: Մեր տպագրության պատմության մեջ հայտնի էր, որ Ամստերդամում հայկական Շարսկանաց զրրի տպագրության համար Մատթեոս Վանանդեցին տառեր էր պատվիրել Նիկոլայուս անվամբ մի լավ վարպետի: Շյուցն ապացուցում է, որ այս վերջինը հունգարացի նշանավոր Նիկոլայուս Միշտոֆալուսի Կիսն է (1627—1702), որը Ամստերդամում ծուլել է լատինական, հայկական և այլ տառեր:

Բեյրութի ֆրանսիական Սեն Ժոզեֆ համալսարանում հայագիտության դասախոս Հովն. Մսրըյանը նույն համալսարանի բանասիրական հանդեսին առնթրեր հրատարակում է հայագիտական Տեղեկագիր<sup>3</sup> (ֆրանսերեն): Արդեն լույս են տեսել նրա առաջին և երկրորդ հատորները, որոնց մեջ զետեղված բոլոր հոդվածների հեղինակը հենց ինքը Մսրըյանն է: Նույն հեղինակն ունի նաև Հայաստանին վերաբերող բազմաթիվ հոդվածներ վերջերս լույս տեսած արաբական հանրագիտարանում (Բեյրութ):

Իհարկե, սրանով չի սպառվում եվրոպական հայագիտության նկարագրությունը: Նա ունի նաև ուրիշ ներկայացուցիչներ, որոնք աշխատում են հայագիտության ալլեայլ բնագավառներում: Հայագիտությամբ հետաքրքրվում են և շատ հեռավոր երկրներում: Օրինակ, վերջերս Տոկիոյի համալսարանի պրոֆեսոր, դոկտ. Էռոլ Ռոուսը Երուսաղեմի հայոց պատրիարքարանի միջոցով դիմել էր Երևանի Մատենադարանին՝ խնդրելով հինգ հայկական ձեռագրերի մանրաժապավեններ:

Որոշ նշանակություն է ձեռք բերում անգլիական (և նրա հետ նաև ամերիկյան) հայագիտությունը, և այժմ արդեն սկսել է գոյանալ

<sup>1</sup> G. Garitte, Une Version arabe de l'Agathange grec dans le Sin. Ar. 395, Le Museon, t. LXIII, 1950, էջ 231—247:

<sup>2</sup> M. Canard, Histoire de la dynastie des Hamdanides de Jazira et de Syrie, t. I, Alger, 1951.

<sup>3</sup> Նույնի՝ Les Hamdanides et l'Arménie, Ann. de l'Inst. d'Et. Or., Alger, 1948.

<sup>4</sup> Arminiya, The Encyclopaedia of Islam, Leiden-London, 1957, vol. I, էջ 634—650:

<sup>5</sup> „Studia et Acta Orientalia“, t. I, Bucarest, 1958.

<sup>1</sup> O. Schutz, Armenian çasar, „Acta Orientalia Hung.“, t. VIII, Fasc. I, 1958.

<sup>2</sup> Նույնի՝ Nicholas Misztotfalusi Kis and the Armenian Book Printing, „Acta Orientalia Hung.“, t. IX, Fasc. I, 1959.

<sup>3</sup> „Bulletin armenologique“, t. I, 1947—1948, t. II, 1953, Beyrouth.

անգլերեն լեզվով հայագիտական որոշ գրականություններ: Իհարկե, դեռ շատ երիտասարդ են Ամերիկայի հայագիտական կենտրոնները: Միայն վերջերս Հարվարդի համալսարանում բացվեց հայագիտական ամբիոն, որի օրինակին այժմ հետևում են նաև ուրիշ ամերիկյան համալսարաններ: Այստեղ գործող հայագետներից պետք է հիշել վերջերս Երևանում հյուրընկալված պրոֆ. Սիրարիի Տեր-Ներսեսյանին, որը գիտական հասարակայնությանը ծանոթ է հայկական մանրանկարչության և մատենագրության մասին իր ֆրանսերեն և անգլերեն բազմաթիվ աշխատություններով:

Ժամանակակից եվրոպական հայագիտության մեջ լեզվաբանական հարցերի ուսումնասիրությունը մեծ չափով թուլացած է: Իհարկե, հնդեվրոպական լեզուների ուսումնասիրությունը այժմ էլ նվաճումներ է կատարում, բայց հայոց լեզվի հարցերը ներկայումս շատ փոքր տեղ են գրավում: Դեռ ավելին, ժամանակակից եվրո-

պական հայագիտությունը շատ հեռու է հնագիտական պեղումների միջոցով ձեռք բերված նյութական մշակույթի հուշարձանները մոտիկից ուսումնասիրելուց:

Անցյալում հայագիտությունը զարգացել է իրարից անջատ տարրեր վայրերում, ինչպես, օրինակ՝ Հայաստանում (էջմիածնում), Ռուսաստանում (Պետերբուրգ, Մոսկվա), Եվրոպայում (Վիեննա, Վենետիկ, Փարիզ, գերմանական քաղաքներ և այլն) և ուրիշ երկրներում: Այսօր համարձակ կերպով կարելի է ասել, որ համաշխարհային հայագիտության կենտրոնը հանդիսանում է Երևանը իր գիտական բազմաթիվ հաստատություններով (Գիտությունների ակադեմիա, Մատենադարան, Պետական համալսարան և այլն), և նրա հետ սերտ կապի առկայության դեպքում միայն եվրոպական զանազան երկրներում գործող հայագիտական օջախները կկարողանան բռնել վերելքի ուղին:

Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ